# ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

## «ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ **(Կ-343-06.07.2018-ՊԱ-011/0)** ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| Հ/հ | Առաջարկի հեղինակը | Օրենքի նախագծի հոդվածը, մասը, կետը կամ ենթակետը | Առաջարկի բովանդակությունը | Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հիմնական զեկուցողի եզրակացությունը | Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ Հանձնաժողովի որոշումը |
|---|---|---|---|---|---|
| 1. | Կորյուն Նահապետյան | 3-րդ հոդված | Հաշվի առնելով, որ նախկին <<Զինապարտության մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի <<ա>> կետի համաձայն 2017/2018 ուսումնական տարում բակալավրի (դիպլոմավորված մասնագետի, ինտեգրացված) կրթական ծրագրով բարձրագույն ուսումնական հաստատություններ տարկետման իրավունքով ընդունված և ընդունվելու օրվա դրությամբ 18 տարին չլրացած քաղաքացիների տարկետման իրավունքի ձևակերպման իրավունքը սահմանվել է <<Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքի 73-րդ հոդվածի 3-րդ մասում, սակայն օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում չի իրացվել զինկոմիսարիատի կողմից նախնական եզրակացության և մարզային (Երևանի | Ընդունելի է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | քաղաքային) զորակոչային հանձնաժողովների կողմից եզրակացության հիման վրա նրանց տարկետման տրամադրման գործընթացը, օրենքի նախագծի 3-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.<br>**<<ՀՈԴՎԱԾ 3. Օրենքի 25-րդ հոդվածում.**<br>**1) 2-րդ մասի 3-րդ կետի <<ա>> ենթակետում `**<br>**ա. <<2-րդ կետով>> բառերը փոխարինել <<2-րդ և 3-րդ կետերով>> բառերով.**<br>**բ. <<4-րդ մասի համաձայն` քաղաքացու`>> բառերը փոխարինել <<3-րդ և 4-րդ մասերի համաձայն` քաղաքացու` համապատասխանաբար ուսումնառության և/կամ>> բառերով.**<br>**2) 3-րդ մասի 1-ին կետի <<ա>> ենթակետում`**<br>**ա. <<2-րդ կետով>> բառերը փոխարինել <<2-րդ և 3-րդ կետերով>> բառերով.**<br>**բ. <<4-րդ մասի համաձայն`>> բառերը փոխարինել <<3-րդ և 4-րդ մասերի համաձայն` համապատասխանաբար ուսումնառության և/կամ>> բառերով:>>:** | | |